

Հիւպատոս մը նեղ եւ պզտիկ կօշիկ հագնելուն համար փողոցէ մը անցած ժամանակ կ'իյնայ: Լրագիրք ոմանք քաղաքականութիւն մը կտեսնեն այդ կօշիկին մէջ:

21 - 28 - 31 Մայիս

Օդերուն խօսք չկայ, բաց ի շնորհակալութենէ:

Տաքութիւնը հետզհետէ կ'աւելանայ: Շատ ամուսիններու մէջ պաղութիւն կտիրէ:

Հողագործներն շատ ուրախ չեն: Շատ փոխանակագիրներ կմերժուին: Մատակարար մը կճանբուի: Խոհարար մը սպասուհւոյ հետ սիրահարութիւն կ'ընէ հարուստ տանմ' մէջ:

Ձգուշացէք ամսոյս մէջ զաւակ բերելէ. մանչերը կա՛մ գրաշար կա՛մ բանաստեղծ կա՛մ դասատու կամ խմբագիր կ'ըլլան. իսկ աղջիկները միշտ նշանտուքի խօսքեր կ'ուզեն լսել:

ՅՈՒՆԻՍ

1 - 5 Յունիս

Ջերմութիւնը կ'աւելնայ:

Կնաթողութիւններ կլսուին:

Մարդուն մէկը նարտ խաղացած ժամանակ կ'իյնայ կմարի, չկրնալով հանդուրժել *կեղայի* հարուածներուն:

Ընդհանուր ժողովոյ մէջ ջերմ վիճաբանութիւն մը տեղի կ'ունենայ. երեսփոխանին մէկն իւր ընդդիմախօսին մէջքին կից մը կու տայ:

6 - 12 Յունիս

Տաք օդ:

Օդեմոլները կը սկսին գարեջուր խմել:

Լրագիրք գրելու նիւթ չեն կրնար գտնել:

Երկու մեծ գողեր կձերբակալուին:

Մատակարար մը իւր տան տիկնոջը աչք կտնկէ:

Տղայոց շատ պտուղ մի տաք:

Ամուսնացեալ մարդ մը աչք կտնկէ ուրիշի կնոջ վրայ: